

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ

(Ա. Մ. Հակոբյանի ծննդյան 80 ամյակի առթիվ)

Կան մարդիկ, որոնց կյանքը ճիստացանք օրինակ է սերունդների համար: Նրանցից է նոր ճասարակարգի կառուցման համար մղված պայքարի մասնակից, կրճատ հայրենասեր, նշանավոր սյառմաբան, Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Արշավիր Մնացականի Հակոբյանը: Առաջատար կյանքով հագեցած ուր տասնյակ տարիներից ավելի է անցել 60-ը նա անմնացորդ նվիրել է անող սերնդի դաստիարակության, հայրենիքի պաշտպանության և գիտության զարգացման գործին:

Ա. Մ. Հակոբյանը ծնվել է 1908 թ. նոյեմբերի 8-ին՝ Կարսի մարզի Սարիղամիշի գավառի Սաճան գյուղում: Հրաշքով խրկվելով հեմալական բուրբերի կոտորածներից, նա ապաստան է գտնում Երևանում, որտեղ և 1920 թ. սկսում իր աշխատանքային գործունեությունը տպարանում՝ սկսելով որպես գրադարի օգնական, ապա՝ գրադար: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո աշխատանքի է ուղարկվում լայն հնարավորություններ ստեղծվեցին նրա համար:

1924 թ. անդամագրվելով լենինյան կոմերիտիությանը, պատանի Ա. Հակոբյանն ամբողջովին նվիրվում է վերածնվող հանրապետության նոր կյանքի կառուցման գործին, զուգահեռաբար սովորում Դանշակում: 1928 թ. հոկտեմբերին տպարանի կուսակցական կազմակերպությունը 20-ամյա կոմերիտական-ակտիվիստին ընդունում է լենինյան կուսակցության շարքեր: 1929—1930 թթ. Ա. Հակոբյանը «Նուրդային Հայաստան» թերթի կուսակցական և մասսայական բաժնի ֆարատարն է: Բանֆակս ու վարտելուց հետո նա նշանակվում է Երևանի գյուղատնտեսական բանֆակի ուսմասվար և պատմության դասատու: 1932—1939 թթ. Ա. Հակոբյանը վարել է կուսակցական ղեկավար աշխատանք, եղել շրջանի բաժնի վարիչ, Լենինականի ֆաղկոմի հրահանգիչ, կուսընկերների ֆարատուր, ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդիստ: 1939—1941 թթ. աշխատել է ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի (Արմֆան) պատմության ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, մարտիսիս-լենինիսի հիմունքներ է դասավանդել գյուղատնտեսական ինստիտուտում: 1941 թ. հուլիսին Ա. Հակոբյանը զորակոչվել է Կարմիր բանակ, ծառայել Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայում, սկզբում որպես 872-րդ հրաձգային զենքի պրոպագանդիստ, իսկ 1942 թ. մարտից՝ «Հանուն հայրենիքի» թերթի խմբագիր: «Հանուն հայրենիքի» թերթը ռազմաճակատային հայ մամուլի պատմության տարեգրության մեջ փայլուն էջեր է գրել: Ավագ ֆաղդեկ Ա. Հակոբյանի ժողովրդաստանական հմուտ գործունեության շնորհիվ թերթը հսկայական դեր է խաղացել դիվիզիայի անձնակազմի բարոյափառական ոգին բարձր պահելու գործում:

1942 թ. հոկտեմբերին ավագ ֆաղդեկ Ա. Հակոբյանը նշանակվել է Անդրկովկասյան ռազմականատի հյուսիսային զորախմբի «Առաջ» հանուն հայրենիքի» թերթի խմբագրի տեղակալ: 1943 թ. սեպտեմբերի սկզբին կապիտան Ա. Հակոբյանը նշանակվել է Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի ֆաղդաժնի ագիտատոր և մասնակցել Թամանի, Կերչի և Ղրիմի ազատա-

կան հաղվածներ, հեղինակակից է բազմաթիվ կոլեկտիվ աշխատությունների. այդ թվում «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակի, «Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծերի» և այլ մենագրությունների: Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակին ցուցաբերած ակտիվ մասնակցության համար (և՛ հեղինակ է, և՛ խմբագրական կոլեգիայի անդամ), նա մի խումբ նշանավոր պատմաբանների հետ միասին արժանացել է Հայկական ՄՍՀ պետական մրցանակի:

Ա. Հակոբյանը գործունե մասնակցություն է ունեցել Սովետական Հայաստանում լույս տեսած փաստաթղթերի մի շարք ժողովածուների, այդ թվում «Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (ռուսերեն) «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» և այլն: Նա գիտության լեհիկյան կուսակցականության բարձրակետերից լուսաբանել է հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի մի շարք պարլեմենտ և ընթացիկ նոր թեմաների ու հարցադրումների լուծման հանապարհով. փույթ չէ, որ նրա առանձին աշխատությունների վրա զգացվում է ժամանակի կնիքը: Բայց նա միշտ շանացել է նշմարագետման, գիտական շրջանառության մեջ է դրել արխիվային և չհրապարակված շատ նյութեր, կատարել գիտական կարևոր ընդհանրացումներ: Ա. Հակոբյանը հավատով առնեցուն գիտնական է, կոմունիստ պատմաբան, բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի մարտիկ: Նրա աշխատություններին հատուկ են համագլխածությունը, սոցիալիզմի կառուցման համար յոթանասունամյա մեր ձեռքբերումների պաշտպանդան: Ա. Հակոբյանի լավատեսությունը, մարդու հանդեպ բարությունը և սրտացավությունը մեզ համար առավել արժեքավոր են դարձնում նրա գիտական վաստակը: Առշավի Հակոբյանը որոշակի ավանդ ունի նաև էրիտասարդ գիտական աշխատողներ պատրաստելու և դաստիարակելու ասպարեզում:

Կոմունիստ գիտնականն ու հայրենիքի քաղաքացի զինվորն այսօր էլ գտնվում է մարտակարգում, եռանդով առնեցուն շարունակում է բեղմնավոր գործունեությունը պատմագիտության բնագավառում և ակտիվորեն մասնակցում հայրենի մարտական ու հեղափոխական ավանդույթների ոգով անող սերնդի դաստիարակության, վերակառուցման ժամանակաշրջանի առաջադիր խնդիրների իրականացմանը:

Առշատություն ենք ցանկանում վաստակաշատ գիտնականին, մեր գործընկերոջն ու բարի խորհրդատուին:

ԽԻՎԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու